Հասցեատեր՝

«Սյունիք ՖԱ» ՍՊԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ fc.gandzasar.kapan@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27.10.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Հենրիկ Խաչատրյան
	Արփի Լազարյան

Վարույթ՝	ԱԽ-048
Խախտում՝	1.Խաղի ժամանակահատվածում «Սյունիք» թիմի գլխավոր մարզիչ Արամ Ոսկանյանի (136) կողմից մրցավարի կայացրած որոշումների նկատմամբ անհամաձայնություն դրսևորելը (Հավելված 1 Ա, 33-րդ կետ) 2.«Սյունիք» թիմի ֆուտբոլիստ Սևակ Ասլանյանի (23271) կողմից մրցավարի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ)
Առաջնություն՝	Առաջին խմբի առաջնություն
Խաղ՝	«Լեռնային Արցախ» - «Սյունիք», 17.10.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Սյունիք» թիմի գլխավոր մարզիչ Արամ Ոսկանյանի (136) նկատմամբ չկիրառել որևէ պատասխանատվության միջոց։
2. «Սյունիք» թիմի ֆուտբոլիստ Սևակ Ասլանյանին (23271) որակազրկել 6 (վեց) խաղով։ Որակազրկումը տարածվում է 2024 թվականի հոկտեմբերի 17-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում)։
   Սահմանված կարգապահական պատասխանատվության միջոցի մի մասը՝ 4 (չորս) խաղ, պայմանականորեն չկիրառել։ «Սյունիք» թիմի ֆուտբոլիստ Սևակ Ասլանյանի (23271) նկատմամբ փորձաշրջան սահմանել 3 (երեք) ամիս ժամկետով՝ մինչև 2025 թվականի հունվարի 17-ը ներառյալ։

Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Սյունիք ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: